

Մուրադ Մ. Հասարայան  
ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ

## ՄԻՋՆԱԳԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԵՐԴ-ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ\*

**Բանալի բառեր** – բերդ-եկեղեցի, վանք-ամրոց, ամրոց, միջնադար, բերդապատ, պարիսպ-հրակնատներ, ավան-դատներ, բուրգեր, թաղածածկ շինություն:

Միջնադարյան Հայաստանում պաշտպանական նպատակների համար ամրոցներից բացի՝ օգտագործվել են նաև վանքերն ու առանձին եկեղեցիները: Այդ երևույթը հատկապես լայն տարածում ստացավ 11-րդ դարից հետո, երբ Հայաստանի անկախության ու պետականության կորստի հետևանքով վանքերը սկսեցին իրենք զբաղվել սեփական անվտանգության ապահովման գործով: Թե՛ նոր կառուցվող և թե՛ արդեն գոյություն ունեցող մենաստանները շրջապատվեցին այնպիսի պարիսպներով, որոնք բնորոշ են ամրոցներին:

Հայաստանի եկեղեցիները նույնպես, դեռ վաղ միջնադարից սկսած, շրջապատվել են պարիսպներով: Այդ մասին են վկայում ոչ միայն պարիսպների պահպանված հետքերը (ինչպես, օրինակ, Երեբունյքի բազիլիկայի շուրջը), այլև հայ պատմիչների վկայությունները: Մասնավորապես արդեն 4-րդ դարում ամուր պարսպով շրջապատված է եղել Աշտիշատի Մայր եկեղեցին<sup>1</sup>:

Հայաստանում սկսեցին եկեղեցիները պաշտպանական նշանակություն ունեցող պարիսպներով շրջապատել 7-րդ դարի արաբական առաջին արշավանքներից հետո՝ «... հայրապետն Ներսէս ... զարտաքոյս հրաշակերտ եկեղեցոյն, զոր իւր իսկ էր շինեալ՝ շուրջանակի պատուար պարսպով փակեալ ամրացուցանէր...»<sup>2</sup>:

Առանձնապես կարևոր է եղել հայկական եկեղեցիների պաշտպանական նշանակությունը միջնադարում՝ սելջուկների ու թաթար-մոնղոլների արշավանքների ժամանակ: Եվ պատահական չէ, որ օտար նվաճողները Հայաստանի ամրոցների հետ միաժամանակ նպատակադրված կերպով

Ժ (ԺԶ) փարի, թիվ 1 (61), հունվար-մարտ, 2018  
ՎԿՎ համահայկական հանդես

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 25.12.2017:

<sup>1</sup> Տե՛ս Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Եր., 1968, էջ 68:

<sup>2</sup> Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 88:

քանդում էին նաև բերդի դեր խաղացած եկեղեցիները: Մխիթար Այրիվանեցու վկայությամբ՝ 1251 թ. մոնղոլները «քակեցին զամենայն բերդս և զամենայն ամուր եկեղեցիս զհայոց...»<sup>3</sup>:

Պահպանված հայկական բերդ-եկեղեցիներն իրենց ճարտարապետությամբ բաժանվում են **երկու խմբի**<sup>4</sup>: **Առաջին** խմբին են պատկանում այն եկեղեցիները, որոնք սկզբից ևեթ շինվել են պաշտամունքային շենքի և պաշտպանական կառուցվածքի հորինվածքների զուգակցումով:

Ժամանակագրական առումով վաղագույն եկեղեցին, որն օժտված է ռազմական կառույցին բնորոշ հատկանիշներով, Ագարակի (Աշտարակի շրջան) միանավ դահլիճն է (IV-V դդ.), որն արևմուտքից կից սրահի հետ ունի հզոր, բրգաձև որմնահեղեր և կազմել է երբեմնի ամրոցի մի մասը՝ նրա հարավարևելյան անկյունը: Որպես կիսաշրջանաձև աշտարակներով ամրոց են կառուցված նաև Առաքելոց վանքի (Իջևանի շրջան) եկեղեցին ու գավիթը (XIII դ.): Սեդվիի աշտարակաձև բերդ-եկեղեցին (XIII դ.) եռահարկ է, հարավարևելյան անկյունում կիսաշրջանաձև բուրգով, որը ներսում միաժամանակ եկեղեցու արսիդ է ծառայում:

Հուշարձանների **երկրորդ**, ավելի մեծաքանակ խումբը կազմված է եկեղեցիներից, որոնք հետագայում վերակառուցվել են ամրոցի: Միջնադարում առանց աշտարակների կրկնակի պատեր են ստացել Մաստարայի ս. Հովհաննես տաճարը (VII դ.), Երիցավանքը (X-XI դդ.) և Աշնակի (X-XI դդ.) եկեղեցիները (Մաստարայի պատերը կանգուն էին մինչև 19 դ.): Իսկ Արուձի ս. Գրիգոր տաճարը (VII դ.), Կումայրիի (VII դ.), Ջրափիի (VII դ.), Նորագավթի (X-XI դդ.), Աշնակի (X-XI դդ.) եկեղեցիները շրջապատվել են կիսաշրջանաձև բուրգեր ունեցող պատերով (Արուձում նրանք պահպանվել էին մինչ XX դ. սկիզբը): Շիրակավանի տաճարը (IX-X դդ.), ի տարբերություն հայկական մյուս բերդ-եկեղեցիների, կրկնապատերով չեն շրջապատել, այլ նրա արտաքին պատերը շարունակել են դեպի վեր և ծածկի վրա վերնահարկ կառուցել: Դեպի նրա միակ մուտքը տանող դրսից շինված քարե աստիճանները արևմտյան պատից զգալի հեռու են դրված, և վերնահարկ կարելի է անցնել միայն փայտե հավաքովի կամրջակով, ինչպես միջնադարյան դոյակներում:

Փարպիի (Արագածոտնի մարզ) Ծիրանավոր եկեղեցին (V դ.) այս տիպի բնորոշ և լավագույն հուշարձաններից է: Այն ունեցել է վերակառուցման մի քանի շրջան և այժմ մեզ է հասել բերդ-եկեղեցու տեսքով<sup>5</sup>: Սակայն եկեղեցին պահպանել է թե՛ իր նախնական ծավալային ու հատակագծային հորինվածքը և թե՛ մանրամասներն ու սկզբնական հարդարանքը: Պահպանվել է նաև հուշարձանի նախնական բարձրությունը որոշող արսիդի կամարը:

Ծիրանավորը կառուցված է մաքուր տաշած բազալտե քարերից, կրաշաղախով: Արևելքից արևմուտք ձգված ուղղանկյունաձև դահլիճը (ներսի չափերն են 4,15 x 8,75 մ) արևելքից ավարտվում է դրսից հնգանիստ, ներ-

3 Մխիթարայ Այրիվանեցույ Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 67:

4 Տե՛ս **Асратян М.**, Крепости – церкви Армении, «IV республиканская научная конференция по проблемам культуры и искусства Армении, Тезисы докладов», Ереван, 1987, с. 86-88:

5 Տե՛ս **Թորամանյան Թ.**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության հատ. 2, Եր., 1948, էջ 227:

սից՝ կիսաշրջանաձև, բավականին խոր արսիդով<sup>6</sup>: Մուտքերը երկուսն են՝ արևմտյան և հարավային պատերում:

Ծիրանավորը VII դ. մեծ վերանորոգում է ունեցել. հիմնովին փոխվել է ծածկը<sup>7</sup>: Փայտե սկզբնական ծածկը փոխարինվել է քարե թաղով, նորոգման ընթացքում ներսից, ընդերկայնական պատերին կցվել են երեք զույգ խոշոր որմնամույթեր, որոնց միջև գցվել են կամարներ ինչպես հյուսիսային և հարավային պատերին զուգահեռ, այնպես էլ հանդիպակաց մույթերի միջև (թաղակիր կամարներ):

Հաջորդ խոշոր վերակառուցումը, երբ եկեղեցին վերածվել է բերդի, տեղի է ունեցել, հավանաբար X դ.: Թ. Թորամանյանը նշում է, որ եկեղեցու տանիքում եղել են IX-X դդ. բնորոշ քանդակազարդ բեկորներ<sup>8</sup> (այժմ այդ մանրամասները չկան): Եկեղեցին ողջ պարագծով շրջապատվել է հաստ, ստորին մասում խոշոր որձաքարով և բազալտի կիսամշակ քարերով, իսկ վերին մասում համեմատաբար կանոնավոր տաշված քարերով շարված պատերով (հաստությունը մոտ մեկ և կես մետր): Այս պատ-պարիսպը թեթևակի նեղանում է դեպի վեր: Միակ դուռը ներքևում իրականացված է եկեղեցու արևմտյան մուտքի դիմաց և ունի քարի հաստ սալից պատրաստված փեղկ, որը փակելուց հետո եկեղեցին փաստորեն անմատչելի է դառնում: Նման քարե փեղկեր են ունեցել Ամբերդի դղյակի (XI դ.), Անիի քաղաքային պարսպի աշտարակի, Հովհաննավանքի պարսպի (XIII դ.) մուտքերը<sup>9</sup>: Հրակնատներով կրկնակի պատերը բարձրանում են տանիքից վեր (մոտ 2 մ), որի հետևանքով ստացվում է մի հարթակ, պատերով պարփակված, որտեղ պաշտպանվողները կարող էին պատսպարվել: Տանիքում, կրկնակի պատերին զուգահեռ ու նրանց պարագծով, մոտ կես մետր բարձրությամբ երկրորդ պատն է շարված, որի վրա կանգնել են պաշտպանվողները, եկեղեցին շրջապատող և գրոհող թշնամուն դիմակայելու համար: Այս պատը կիսով չափ նստում է ծածկի թաղի վրա և գուցե գմբեթարդի քանդվելու պատճառն է եղել: Հրակնատներն իրենց ձևով համապատասխանում են հրազենի օգտագործմանը և հանդիպում են Հայաստանում ուշ միջնադարում (Վրաստանում նույնպես այն տարածված է XVII-XVIII դդ. ամրոցներում և վանքերի պարիսպներում): Նրանք կիսակոնաձև են, կրաբետոնից շինված, պատից պահունակային դուրս եկող փայտերի հիմքով: Այս նույն ձևն ունեն Ամարասի վանքի պարիսպների (XVII դ.), Աշտարակի Ծիրանավորի բազիլիկայի վերակառուցված մասի (XVIII դ.) հրակնատները: Այս հրակնատները, հավանաբար, Փարպիում ավելացվել են և պատերի վերին հատվածները վերաշարվել նույնպես XVII-XVIII-րդ դարերում: Իսկ եկեղեցին շրջապատող կրկնակի պատերն արդեն X-XII դդ. կառուցված լինելու ապացույցն է կրկնակի պատի մեջ բացված մուտքի բարավորի վրայի Զաքարե ամիրսպասալարի 1191 թ. արձանագրությունը<sup>10</sup>: Եկեղեցին ամրոցի է վերածվել ամենայն հավանա-

6 Տե՛ս **Հասրաթյան Մ.**, Հայաստանի արտաքուստ շեշտված արսիդով միանավ հուշարձանները, «Լրաբեր հաս. գիտ.», 1976, N 11:

7 Տե՛ս **Թորամանյան Թ.**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, էջ 227:

8 Տե՛ս նույն տեղում:

9 Տե՛ս **Халпахчян О. X.**, Строительные особенности и декоративное убранство крепостей древней Армении, «Архитектурное наследство», N 20., 1972, с.119:

10 Տե՛ս **Շահինյան Ա.**, Կոշի կոթողը և նրա արձանագրությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1968,

կանությամբ X դարում, «...երբ արաբները զարհուրելի ավերումներ էին գործում այդ շրջանի մեջ: Գուցե Բյուրականի վրա արաբների հարձակումը և շրջանում արած կոտորածները ստիպեցին վարպետներին եկեղեցին իբրև բերդ ամրացնել, որպես վերջին պատսպարան...»<sup>11</sup>:

Փարպիի Ծիրանավորի կրկնապատերն արևմտյան մուտքից բացի ոչ մի բացվածք չունեն: Բերդի անառիկությունն ուժեղացնելու համար փակվել են եկեղեցու ինչպես լուսամուտները, այնպես էլ հարավային դուռը:

Լույսի միակ աղբյուրը ծածկի թաղի միջի երդիկն է (0,35 x 0,42 մ չափի), որը, անշուշտ, պաշարման ժամանակ լրացուցիչ կապի միջոց է եղել վերին հարթակում գտնվողների և եկեղեցու ներսի միջև: Սակայն տանիքի և շենքի ներսի հիմնական կապն ապահովում է արևմտյան կրկնապատի հաստության մեջ թողնված ուղղաձիգ անցքով (0,41 x 0,51), որի պատերի քարե ելուստները աստիճանների դեր են կատարել: Այս անցքի պատճառով եկեղեցին շրջապատող պատերից ամենահաստը արևմտյանն է՝ ներքևում 2,9 մ լայնությամբ, իսկ մյուս պատերի հաստությունը 1,85 մ է:

Փարպիում լրացուցիչ պատերը վերևում ավելի նեղ են (1,05 մ), քան հիմքի մոտ: Պատերի դեպի վերև այսպիսի նեղացումը մեծացնում է նրանց կայունությունը: Իսկ դա անհրաժեշտ է առաջին հերթին այն պատճառով, որ լրացուցիչ պատերը կոնստրուկտիվ կապ չունեն եկեղեցու պատերի հետ: Պատերի նման նեղացումը կիրառվել է միջին դարերի հայկական ամրոցաշինության մեջ (Բջնի, Աբերդ, Կիլիկիայի մի շարք ամրոցներ): Դեպի վեր նեղանում են նաև Մեղրու բերդի աշտարակների պատերը<sup>12</sup>:

Փարպիի բերդ-եկեղեցին հայկական շատ ամրոցների նման գետնափոր գաղտնի ելք է ունեցել դեպի մոտակա ձորակը՝ պաշարման դեպքում ջուր վերցնելու համար: Այժմ այդ անցքը լցված է, սակայն ըստ գյուղի բնակիչների հայտնած տեղեկության՝ այն բացված է եղել եկեղեցու ներսում՝ հարավային պատի արևմտյան հատվածին կից: Գետնափոր ուղու մասին նշում է նաև Հ. Շահխաթունյանը Փարպիի Ծիրանավոր եկեղեցու նկարագրության մեջ՝ «Եկեղեցին կարի փոքր անմիջաբար յեղեր անդ գետակին՝ ի բարձր դրութեան՝ կառուցեալ ի սրբատաշ քարանց, ի վաղ ժամանակաց... ի պատճառս երկիւղի ասպետակութենց ի չորից կողմանց կարի ստուար կրաշաղախ մեծամեծ վիմօք հիւսել են զայլ որմն կից Ը որմունս եկեղեցոյն, և այսպես բարձրացուեալ անդր քան զտանիքն՝ արարեալ են իբրև աշտարակ հօր ընդդէմ հինից և ասպատակողաց և արդէն կան տեղիին նետաձգութեց կամ հրացանից ի բարձանց անտի... ի միջոց այսր դրան ասէն, էր գետնափոր ճանապարհ ի խոնարհ զգետակն վասն առնչոյ անտի զջուր ի ժամանակի պաշարման»<sup>13</sup>:

Ուշ միջնադարում բերդ-եկեղեցու է վերածվել Աշտարակի Ծիրանավոր եռանավ բազիլիկան (V դ.): Սրբաշատ տուֆ քարերից կառուցված եկեղեցու ուղղանկյունաձև ծավալը բարձրանում է բազմաստիճան որմնախարիսի վրա: Դահլիճը (9,38 x 19,15 մ չափերով) երեք նավի է բաժանվում

N 2, էջ 200-201:

11 Թորամանյան Թ., նշվ. աշխ., էջ 227:

12 Տե՛ս Հասրաթյան Մ. Գ., Մեղրու բերդը, «Լրաբեր հաս. գիտ.», Եր., 1968, N 8:

13 Շահխաթունյանց Տովհաննես, Ստորագրություն կաթողիկե Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հատ. 2, էջմիածին, 1842, էջ 75:

երեք զույգ T-աձև կտրվածքով մույթերով: Պայտաձև հատակագծով խորանը երկու կողմի թաղածածկ ավանդատների հետ ներառված է արտաքին պատերի ուղղանկյունաձև պարագծի մեջ: Եկեղեցին առաջին վերակառուցումն ապրել է դեռ վաղ միջնադարում՝ հավանաբար VI-VII դդ., երբ փայտե ծածկը փոխարինվել է քարե թաղերով: Այդ են վկայում հյուսիսային պատի որմնասյուները, որոնք չեն համընկնում մույթերին: Սյուս խոշոր վերակառուցումը կատարվել է Ծիրանավորը բերդ-եկեղեցու վերածելու ժամանակ: Արևմտյան և հյուսիսային պատերին կից արտաքուստ շինվել են մոտ 12 մ բարձրությամբ կրկնապատեր, իսկ հարավային, երևի արդեն ավերված պատը վերաշինվել է և ստացել հրազենի օգտագործման համար նախատեսված հրակնատներ: Կրկնապատերը (ներքևում 1,3 մ հաստությամբ, վերևում՝ 0,6 մ) շարված են ստորին մասերում կիսամշակ որձաքարից, իսկ վերին մասերը՝ սև և կարմիր տուֆի կոպտատաշ քարերից, կրաշաղախով: Արևելյան կողմից եկեղեցու պատն անմիջականորեն դրված է Քասախի խոր ձորի քարափի եզրին, միանգամայն անմատչելի է և այդ պատճառով կրկնապատի կառուցման անհրաժեշտությունը, ինչպես և հնարավորությունը, չի եղել:

Վերակառուցման հետևանքով փակվել են արևմտյան մուտքը և լուսամուտները, իսկ հարավային մուտքը ստացել է միակտոր քարե դուռ<sup>14</sup>: Մուտքի անառիկությունը ապահովելու համար հարավային պատի վերին մասում շինվել են հինգ, կոնաձև զրահածածկով խոշոր հրակնատներ, իսկ նրանցից վերև՝ մոտ 30, շախմատաձև դասավորված, ավելի փոքր փայտե բարավորով ուղղանկյուն բացվածքներով հրակնատներ (արտաքին չափերը՝ 10 x 30 սմ, ներսից՝ 75 x 110 սմ)<sup>15</sup>:

Բազիլիկայի հարավային կողային նավի վրա պարսպապատի հետ միաժամանակ կառուցվել է թաղածածկ ձգված շինություն՝ հավանաբար զինապահեստ կամ մարտիկների պատսպարան, որն արևմուտքից դուռ և պատուհան է ունեցել:

Բերդ-եկեղեցու տանիքի մարտահարթակը եղել է փայտե տախտակամածից (պահպանվել են երկայնական պատերի մեջ ագուցված գերանների մնացորդները), որը 2,5 մ ցածր է շինված բերդապատի վերևի նիշից<sup>16</sup>: 1980-ական թթ. վերջերին հեռացվեցին բերդ-եկեղեցու արևմտյան կրկնապատը և հյուսիսայինի վերին մասը, որի հետևանքով ճշտվեց հուշարձանի հորինվածքը (այն «արևմտյան» տիպի բազիլիկ է, բարձր միջին նավով), բացվեցին արևմտյան շքամուտքը, Գազիկ Ա Բագրատունու XI դ. արձանագրությունը և այլն: Հայտնի չէ, թե բազիլիկան երբ է վերածվել բերդի: Սակայն հարավային, վերաշարված պատի մեջ օգտագործված է մի գերեզմանաքար, որն ունի հետևյալ արձանագրությունը՝ «ԹՎ ՌՃԾ (1701) այս է հանգիստ Ղարախանին»<sup>17</sup>: Այս փաստը ցույց է տալիս, որ Ծիրանավորի վերակառուցումը բերդ-եկեղեցու տեղի է ունեցել XVIII դ. հետո, մինչև XIX դ. առաջին քառորդը (1828 թ. Ռուսաստանին միանալուց հետո

14 Տե՛ս **Շահազիզ Ե.**, Աշտարակի պատմությունը, Եր., 1987, էջ 166:

15 Տե՛ս **Զարյան Ա.**, Պաշտպանական կառույցներ, «Գիտություն և տեխնիկա», 1988, N 2, էջ 41:

16 Տե՛ս նույն տեղում, էջ 41:

17 **Եղիազարյան Հ.**, Աշտարակ (բնակավայրը և պատմական հուշարձանները և վերջիններիս վիմագրությունը), «Էջմիածին», 1968, N 8, էջ 55:

Արևելյան Հայաստանը վերջնականապես ազատվեց թշնամական հարձակումների վտանգից և պաշտպանական կառույցներ ստեղծելու կարիքը չուներ այլևս): Կա տեսակետ, որ բազիլիկյան բերդի է վերածվել XIX դ. ռուս-պարսկական պատերազմի տարիներին<sup>18</sup>:

Աշտարակի այն վայրը, որտեղ կանգուն է Ծիրանավորը, կոչվել է Բերդաթաղ, և հնուց ի վեր այդ քարափին ամրոց է եղել: Նրա մնացորդները դեռ պահպանված են եղել XIX դ. սկզբին՝ այն տեսել է Հ. Շահխաթունյանը, որը հայտնում է նաև Ծիրանավորի ծածկի քանդվելու ժամանակը՝ «Ի կրկնակի անդ երկայնեալ սարահարթի լեալ է յառաջագոյն ամրոց՝ որոյ պարիսպն յարևմտից կայ տակին կիսաւեր. իսկ միա կողմունքն են զառընդթափ ձոր խորին զգետն... ի հինգ եկեղեցեաց սորա Բ են ամրոցի անդ. ա՛՛ Ծիրանաւոր կոչեցեալ յանուն Ս. Աստուածածնի ի կոփածոյ քարանց. անմիջապէս շուրջ զորմովի նորին բարձրացուցեալ զորմն կրկին՝ որպէս զեկեղեցիսն: Մաստարայի և Փարպոյ, արարեալ են արդարև աշտարակ անմատչելի յամրոցի անդ նախ քան զամս ինչ աստ կատարէին բնակիչքն զժամերգութիւնս իրեանց, այլ ի խոնարհել կամարյակի տանեաց նորա յամի 1815...»<sup>19</sup>: Հետևաբար Ծիրանավորը դարձել է Աշտարակի ամրոցի բաղկացուցիչ և կարևոր մի տարրը՝ փաստորեն նրա բուրգը:

Աշտարակի Ծիրանավորի նման վերակառուցվել է նաև Բյուրականի Ս. Հովհաննես եկեղեցին, որը կառուցել է Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը (898-929 թթ.)<sup>20</sup>: Այն ուղղանկյուն արքիդով, երկու ավանդատներով թաղածածկ դահլիճ է, որի հյուսիսային և արևմտյան պատերին կից, ինչպես Ծիրանավորում, արտաքուստ կառուցված են ամուր կրկնապատեր, որոնք փակել են եկեղեցու արևմտյան մուտքը և հարավային լուսամուտները: Կրկնապատերը միայն պաշտպանական նշանակություն են ունեցել՝ հրակնատներից զուրկ են, չկա նաև վերնահարկ: Բյուրականի եկեղեցու այս վերակառուցման ժամանակը ստույգ հայտնի չէ: Հ. Շահխաթունյանը նշում է, որ XIX դ. առաջին կեսում շենքի ծածկը քանդված էր և այն 1841 թ. փոխարինվել է փայտե ծածկով<sup>21</sup>: Պետք է կարծել, որ Բյուրականում կրկնապատերը շարվել են XIX դ. եկեղեցու ծածկի վերանորոգման ընթացքում (պատահական չէ, որ Հ. Շահխաթունյանը կրկնապատերի մասին ոչինչ չի ասում) և նրանք ունեցել են առաջին հերթին կոնստրուկտիվ նշանակություն՝ ուժեղացնելու արդեն խարխված հյուսիսային և արևմտյան պատերը:

Միջնադարյան Հայաստանի բերդ-եկեղեցիների ճարտարապետական կերպարի ու մանրամասների մեջ որոշակի երևում է հայկական ամրոցաշինության հետ ունեցած ծագումնաբանական կապը (աշտարակներ, որմնահեցեր, հրակնատների առկայություն և այլն): Այս հատկանիշները հնարավորություն են տվել ոչ միայն պասիվ պաշտպանության անցնել և միայն պատսպարել տվյալ բնակավայրի բնակչությանը անկախությունից զուրկ երկրում թշնամու հարձակման ընթացքում, այլև զինված հակահարված տալ հակառակորդին, սկստիվ ռազմական գործողություններ վարել:

18 Տե՛ս **Զարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 40:

19 **Շահխաթունյանց Հ.**, նշվ. աշխ., էջ 84:

20 Տե՛ս **Դրասխանակերտցի Հ.**, նշվ. աշխ., էջ 336:

21 Տե՛ս **Շահխաթունյանց Հ.**, նշվ. աշխ., էջ 72:

Սակայն եկեղեցիների ներքին սահմանափակ տարածությունը հնարավորություն չէր ստեղծում պատասպարել նաև շրջակա բնակչությանը՝ դիմակայելու երկարատև պաշարմանը: Այս պատճառով բերդ-եկեղեցիները, որոնք ստեղծվում էին կրկնապատերի ավելացումով, ուշ միջնադարում տարածում չստացան: Նշված պայմաններին ավելի համապատասխանում էին պարիսպներով շրջապատված եկեղեցիները և վանք-ամրոցները, որոնք և գերակշռող դարձան 15-16-րդ դդ. Հայաստանի պաշտպանական կառույցների շարքում:

Վաղքրիստոնեական և միջնադարյան Հայաստանի առանձին կանգնած եկեղեցիներ, որոնք շրջապատված են եղել պարիսպներով, քիչ են պահպանվել: Ընդ որում, այդ պարիսպները գուրկ են պաշտպանական կառույցներին բնորոշ տարրերից: Այդպիսին են, Երեբունյքի բազիլիկայից բացի, որը արդեն վաղ միջնադարում ուներ կոնստրուկտիվ ուղղանկյուն պարիսպներ, նաև Աշտարակի Կարմրավորը (պարիսպները շինվել են XIII դ.), Ծիծեռնավանքի եռանավ բազիլիկան (պարիսպները հետագայում հիմնովին նորոգվել են 1613 թ. Հայկազ իշխանի կողմից)<sup>22</sup>:

Ուշ միջնադարում ամրոցին բնորոշ պարիսպներով, որոնք ուժեղացված էին բուրգերով, շրջապատվեցին Ս. Հռիփսիմեի տաճարը (618 թ.) Էջմիածնում և Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցին (1031 թ.):

1776 թ. Սիմեոն կաթողիկոսի օրոք Մկրտիչ եպիսկոպոսը Ս. Հռիփսիմե տաճարի շուրջը կառուցեց աղյուսաշեն, շրջանաձև երկու բուրգերով պարիսպներ<sup>23</sup>: Բայց այդ պարիսպները իրենց նախնական վիճակով մեզ չեն հասել՝ նրանք վերակառուցվել են XIX դ. վերջում՝ պարսպապատ տարածությունը ընդարձակվել է հարավային կողմից և նոր պատերը շինվել են սրբատաշ տուֆ քարերից (ինչպես նաև վերաշարված արևելյան պատը): Սակայն Պետական կենտրոնական ռազմա-պատմական արխիվում պահպանվել է 1827 թ. կատարված Էջմիածնի գլխավոր հատակագծի չափագրությունը, որի վրա պատկերված են Հռիփսիմեի տաճարի սկզբնական պարիսպները՝ ուղղանկյուն, չորս անկյուններում շրջանաձև բուրգերով<sup>24</sup>:

Կա նաև մեկ այլ վավերագիր՝ Հռիփսիմեի բերդ-եկեղեցու արտաքին կերպարը պատկերող: Դա հայ դասական նկարիչ Վարդգես Սուրենյանցի կտավն է՝ նկարված 1897 թ. (Հայաստանի պետական պատկերասրահ): Այն միանգամայն որոշակի պատկերացում է տալիս, թե ինչպիսին է եղել բերդի վերածված վաղ քրիստոնեական տաճարը: Վերջինս ուշ միջնադարում՝ մինչև XIX դ. վերջը, գտնվել է Վաղարշապատ քաղաքը Երևանին կապող ձանապարհի վրա՝ բնակավայրից դուրս: Նկարում տաճարը, շրջապատված բերդանման հզոր պարիսպներով, բարձրանում է ամրոցի տարածությունում: Պարիսպները արևմուտքից և հարավից դարպասներ չունեն, հետևաբար XVII դ. բերդ-եկեղեցին ունեցել է այժմ էլ գոյություն ունեցող հյուսիսային՝ միակ դարպասը (պարիսպների շինարարական արձանագրությունը պահպանվել է նրա ներսի կողմում): Պարիսպների ներ-

22 Տե՛ս Հասրաթյան Մ. Ս., Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Եր., 1985, էջ 236:

23 Տե՛ս Երեմյան Ա., Храм Рипсимэ, Ереван, 1955, с.30.

24 Տե՛ս Халпахчьян О. Х., Композиционные особенности планировки оборонительных сооружений Армении, «Архитектурное наследие», N 19, М., 1972, с. 148.

սում, տաճարի արևմտյան կողմում երևում են բնակելի երկհարկանի շենքերի վերին մասը, ուղղանկյուն լուսամուտներով և հարթ տանիքներով (այժմ այդ շենքերը չկան): XIX դ. վերջերին տարածքի ընդարձակումից հետո բերդ-եկեղեցին ստացել է նաև մուտք՝ հյուսիսային կողմից: Պարիսպների վերակառուցման ժամանակ քանդվել են հյուսիսարևելյան և հարավարևելյան աղյուսաշեն բուրգերը և նոր՝ արևելյան պատի այդ անկյուններում շինվել քարե, սնամեջ գլանաձև աշտարակներ: Նախնական բուրգերից տեղում մնացել են հյուսիս արևմտյանը և հարավ արևմտյանը: Նրանք ունեն կոպտատաշ բազալտի քարերից շինված որմնախարիսխի վրա բարձրացող աղյուսաշեն պատեր, գլանաձև են, հիմքում մոտ 8 մ (հյուսիսայինը) և 7 մ (հարավայինը) տրամագծով: Բուրգի պատերը դեպի վեր նեղանում են, որը կայունություն է հաղորդում կավե շաղախով շարված աղյուսե հաստ պատերին: Ուշագրավ է, որ բուրգերն ունեցել են ատամնավոր վերջավորություն: Նույն շինարարական տեխնիկայով են կառուցված նաև պարսիպների ուղղագիծ հատվածները, սակայն հյուսիսային դարպասը շինված է սրբատաշ տուֆ քարերով:

Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցին բազալտե քարերով շարված ամրոցատիպ պարիսպներով շրջապատվել է XVII դ.: Պարիսպները կանոնավոր ուղղանկյուն հատակագիծ ունեն, արևելքից արևմուտք ձգված և ուժեղացված են երկու բուրգերով՝ հարավային պարսպի արևելյան և արևմտյան անկյուններում: Նրանք սնամեջ են, շրջանաձև հատակագծով և մուտքով հաղորդակցվում են բակի հետ: Բուրգերն ունեն նեղ ձեղքերի ձևով սակավաթիվ լուսամուտներ, որոնք նաև հրակնատների դեր են խաղում: Միակ՝ թաղակապ դարպասը գտնվում էր հարավային պատում, եկեղեցու հարավային մուտքի առանցքով: Պարիսպների հյուսիս արևմտյան անկյունում թաղածածկ շինություն կա, որը հավանաբար միաբանության համար սեղանատուն է ծառայել:

Իր ճարտարապետությամբ Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցի-ամրոցը միջանկյալ դեր է խաղում Հայաստանի բերդ-եկեղեցիների և վանք-ամրոցների միջև: Նրանց էական տարբերությունն այն է, որ վանք-ամրոցների պարիսպներին կից պարագծով կառուցվում էին նաև բնակելի և տնտեսական բազմաթիվ շենքեր, որոնք բացակայում էին եկեղեցի-ամրոցներում: Այդ կապակցությամբ մեծ հետաքրքրություն է ներկայացնում վանք-ամրոցի հորինվածքը՝ որպես ճարտարապետական երկու տարբեր օրգանիզմների՝ կրոնական և պաշտպանական կառուցվածքների յուրօրինակ միավորում:

**Մուրադ Մ. Հասրաթյան** – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են միջնադարյան Հայաստանի ճարտարապետությունն ու արվեստը:



## Summary

### FORTRESS-CHURCHES OF ARMENIA IN THE MIDDLE AGES

Murad M. Hasratyan

**Key words** – fortress-church; monastery- fortress; Middle Ages; defensive wall; fences; sacristies; pyramids; felting constructions, refectory

In Middle Ages in Armenia in addition to fortresses and monasteries separate churches were also used for defense. There are two architectural groups of fortress-churches in Armenia. The first group includes those churches, which were initially built for defensive purposes, for instance the one-nave basilica of Agarak (IV century), the church and the vestibule of the monastery of Arakelots in Ijevan (XIII century), a three-storied fortress-church of Sedvi (XIII century).

The second larger group includes the churches that were converted into fortresses in the Middle Ages. the Ashtarak basilica (V century), the Tsiranavor church in Parbi (V century), the central-cupola church in Mastara (VII century), etc., were surrounded by walls without towers, while the churches of Kumayri (VII century), Jrapı ( VII century), Noragavita (X-XI centuries) Ashnak (X-XI centuries) were surrounded by walls with semi-circular pyramid towers. Over the roof of the Shirakavank cathedral (IX century) a room for the defenders was built.

In the architecture of the fortress-churches their genetic connection with the fortification art of medieval Armenia is definitely manifested and the innovation is that it is an original combination of the compositions of the cult building and the defensive structure.

## Резюме

### КРЕПОСТИ-ЦЕРКВИ СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ

Мурад М. Асратян

**Ключевые слова** – крепость-церковь, монастырь, крепость, средневековье, крепостная стена, ограждения, ризницы, пирамиды, погребения, трапезная.

В Армении, помимо крепостей, в средние века для обороны использовались также монастыри и отдельные церкви. Крепости-церкви в Армении своей архитектурой подразделяются на две группы. К первой относятся те церкви, которые с самого начала возводились в оборонительных целях.

Таковы однефная базилика Агарака (IV в.), церковь и притвор монастыря Аракелоц Иджевана (XIII в.), трехэтажная крепость-церковь Седви (XIII в.).

Вторая, более многочисленная группа, состоит из церквей, которые в средние века были переделаны в крепости. Были окружены стенами без башен Аштаракская базилика (V в.), зальная церковь Циранавор в Парби (V в.), центральнокупольная церковь в Мастаре (VII в.) и т.д., а церкви Кумайри (VII в.), Джрапи (VII в.), Норагавита (X-XI вв.) Ашнака (X-XI вв.) были окружены стенами с полукруглыми башнями. Над кровлей собора Ширакаванка (IX в.) было сооружено помещение для обароняющихся.

В архитектуре крепостей-церквей определенно проявляются их генетическая связь с фортификационным искусством средневековой Армении и нововведение – самобытное сочетание композиций культового здания и оборонительного сооружения.

## REFERENCES

1. **Pasvtos Buzand**, Patmutyun Hayoc, Yer., 1968 **(In Armenian)**
2. **Yovhannu katoghikosi Draskhanakerttsvoy** Patmutivn Hayots, Tiflis, 1921 **(In Armenian)**.
3. **Mkhitar Ayrivanecvoy** Patmutivn Hayots, M., 1980 **(In Armenian)**.
4. **Asatryan M.**, Крепости – тсеркви Армении // IV respublikanskaya nauchnaya konferenciya po problemam kul'tury i iskusstva Armenii, Tezisy dokladov Yer., 1987 **(In Russian)**.
5. **Toramanyan T.**, Nyuter haykakan tshartarapetutyanyan patmutyan, hat. 2, Yer., 1948 **(In Armenian)**.
6. **Hasratyan M.**, Hayastani artaqst sheshtvats absidov mianav hushardzanner. // Lraber has. git., Yer., 1976, N 11 **(In Armenian)**.
7. **Khalpachyan O. Kh.**, Stroitel'nye osobennosti i dekorativnoe ubranstvo krepostey Armenii // Arkhitekturnoe nasledstvo, N 20, 1972 **(In Russian)**
8. **Shahinyan A.**, Koshi kotoghə yev nra ardanagrutyunə // Patma-banasirakan handes, Yer., 1968, N 2 **(In Armenian)**.
9. **Hasratyan M. G.**, Meghru berdə // Lraber has. git., Yer., 1968, N8 **(In Armenian)**.
10. **Shahkhatunyants Yovhannes**, Storagrutivn katoghike Ejmiatsni yev hing gavaratsn Araratay, hat. 2, Ejmiatsin, 1842 **(In Armenian)**.
11. **Shahaziz Ye.**, Ashtaraki patmutyunə, Yer., 1987 **(In Armenian)**.
12. **Zaryan A.**, Pashtpanakan karuycner // Gitutyun yev tekhnika, 1988, N 2 **(In Armenian)**.
13. **Yeghiazaryan H.**, Ashtarak (bnakavayrə yev patmakan hushardzannerə yev verjinneris vimagrutyunə // Ejmiatsin, 1968, N8) **(In Armenian)**.
14. **Hasratyan M. S.**, Patma-hnagitakan usumnasirutyunner, Yer., 1985 **(In Armenian)**.
15. **Yeremyan A.**, Khram Ripsime, 1955 **(In Russian)**.
16. **Khalpachyan O. Kh.**, Kompozicionnye osobennosti planirovki oboronitel'nykh sooruzheniy Armenii // Arkhitekturnoe nasledstvo, N 19 **(In Russian)**.